ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայ կինը հայ ընտանիքի և հասարակության շարժիչ ուժն է: Դարեր շարունակ մեր հայրենիքի խաղաղության և հզորության համար մղվող բոլոր պայքարներում հայ կինն ունեցել է իր անհերքելի դերն ու հավասարապես մարտնչել իր ամուսնու և որդիների հետ:

Պատմության մեջ շատ անգամներ են հայ մայրերի մարտական խմբերն ահ ու սարսափ տարածել թշնամու բանակում, իսկ խաղաղության ժամանակ այդ նույն մայրերը եղել են քնքշանքի և սիրո լավագույն օրինակը:

Բոլոր դարերում հայ մայրերն են, որ զինվել են հանուն հայրենիքի, նահատակվել՝ հանուն հավատքի:

Դուք եք, որ ծնել ու դաստիարակել եք մեր ժողովրդի արժանի զավակներին: Դուք եք, որ կաթի հետ նրանց սերմանել եք սերը առ հայրենիք և ազատություն:

Սիրելի մայրե՛ր, քույրե՛ր, կանա՛յք, Ժամանակակից փոփոխվող աշխարհում շարունակեք մնալ հայ կնոջ և մոր լավագույն օրինակը, թույլ մի տվեք ձեզնից զատել ձեր գենետիկ հիշողության մեջ դաջված որակները:

Եղեք երջանիկ և երջանկացրեք, կրթեք նոր սերունդներ, ովքեր կլինեն տասնապատիկ անգամ ավելի խոհեմ, քաջ և ազատատենչ:

Շնորհավորում եմ բոլորիդ այս գեղեցիկ տոնի կապակցությամբ:

Խոնարհումս այն բոլոր մայրերին, ում որդիները որոշիչ պահին ընտրեցին Մայր Հայաստանը:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան